բնագրին հարազատ ասայուածքը թարգմանած, եւ շատ տեղ փոխուած է։ Այսպէս Մաղխասեանի թարգմանութեան մէջ (էջ 2) կը կարդանք. "Վասն զի բաժինքներն այնպէս հաւասար են՝ որ (կը՝ գծենք) մարդ ասէլ էլ դնեն լ կարող ասել թէ այս մէկը դուք լա՞ է„. ուր բնագիրը կ'ըսէ՝ "... որ հեռաւորագոյնքիւ կարող լ ասելոյ՝ թէ սոքա է լաւագոյնք։„ Նոյնպէս (էջ 3) կէնտի խօսքին՝ "Զեմ կարող ձեզ հասանել...„ կը պատասխանէ Գլոստէր. "Բայց սորա մայրն եւ ես միմեանց շատ լաւ էինք հասանում...„, ուր բնագիրը կարուկ եւ ջղաշատ ոճով կ'ըսէ. "Բայց սորա մայրն կարող է...„

Բաւական փոխուած է (էջ. 4) Լիրի խօսքը.

...“Այժմ որ հեռացանք թագաւորական
Բոլոր հոգսերից եւ արդիւնքներից
Ասացէք գասորերս, երեքիդդ որին...„

ուր բնագիրը կ'ըսէ.

“Այժմ որ հեռացանք իշխանութենէն
Երկրի շահերէ եւ տէրութեան հոգերէ,
Ձեր երեքէն որմն...„

Նոյնպէս Գոնէրիլի խօսքը՝

“Ինչպէս մի կենդանի ճոխացած
Առողջութիւնով, փառքով, մեծութեամբ
Եւ գեղեցկութեամբ, այնպէս շատ օրչափ...„

ուր բնագիրը կ'ըսէ.

“Ինչպէս կենդանի մի ճոխացած
Շնորհէզ, առողջութեամբ, գեղեցկութեամբ
Եւ պատուով, այնչափ՝ օրչափ...„

* * * Այսչափս թարգմանութեան մասին։ Իսկ հայերէնի մէջ նորութիւն մուծանելու նկատմամբ՝ կ'ըսէ թարգմանիչն թէ չորս նորութիւն ուզած է մուծանել, "Ա.) Ս., գա, նա, ցուցական դերանուններէ իգական սեռի ձեւերն՝ — սկ, գէ, նէ։ Բ.) Լ (լեռն փշիկով)։ Գ.) Ս., գա, նա, դերանուններէ արական եւ հայցական հոլովներն, — տր. սոքան, գոքան, հյց. սքան, գքան, եւ Դ.) կարելի միօրինակութիւն այն բառերի հոլովմունքին մէջ, որոնք վերջին վանկում ունին ա եւ է ձայնաւորներն։„

Ասոնց վրայ ունիւրք դիտողութիւններ հանդիպ յաջորդ թուերուն մէջ։

Հ. Գ. Գ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԿԵԹԻԼ ՄԻ ՋՈՒՐ

Անգայտացեալ օրը պայթեց,
Մի պահ խաղաղ ծովակն յուզեց.
Որոտալով մրրկակաշունչ
Հընչեցին սէգ ալեաց մրոնչ:

Որոք քարձրացան սուր՝ փրփրահերը,
Դողացնելով ըզծովեզերը,
Սպանդալից եւ կատաղի,
Փոշիացած ծպտակ՝ ադի:

Ծովն յետ յառաջ գնայր ու խաղայր,
Բախէր եւ ինքն տեղէր դողայր,
Ահեղ ջրերէն կարծես բարձր.
Անսովիկ փակ քաղքին ի դրան:

Փոթորիկն երբ մրմռէր զերդ կենդ,
Երկնից կաթիլ մի ջրոյ պարզ չինչ
Ովկիանուն անկաւ ի ծոց.
Խաւխմսուեցաւ իւր ողջն ու կոծ:

Ի ծովուց այդ յանբաւութիւն՝
Ի՞նչ էր ինքը...: Ոնչնութիւն...
Մինչ երկնքում՝ տունն էր ամպիկ,
Ջով անծրեւաց կաղմէր մանրիկ:

Ցանիժամ լուծուած՝ անհետացած
Ծոր անդընդում զոռոզ ալեաց,
Խառնուեցան իւր հեզ արտասունք...
... Բայց զերծացին յերկնից զուարթունք: —,

Թերահաւատ կաթիլն դրացի
Բերանաբաց կար մի խեցի,
Որ զայն կաթիլ յանկարծ կուլ տուեց,
Ու իւր ծոցում սընոյց պահեց:

Անցան օրեր, տարիներ շատ,
Երբ մի ծկնորս խեղճ ու աղքատ,
Խրլեց խեցին այն ժայռապինդ...
Բացաւ տեսաւ սքրտիւն խինդ...

Ի զիրկ խեցւոյն այն մանռապատ,
Գտայր մարգարիտ չինչ զինչ արծաթ:
Ծախելով նա դարձաւ հարուստ.
Ապահովեց կեանքն ու ապրուստ: —

Ա՛յսպէս չընչին ջրոի հատիկ,
Երջանկացուց խեղճ ընտանիք.
Թագաւորաց յետոյ թագին
Զարդ մի եղաւ՝ գանձ թանկագին:

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԴԵՒ ԿԵՍ ԹՈՒՄԵՆԱԿ

(Իսպոլիցից)

Քանի որ այսպէս պարզ է եղանակ՝
Սեւ մութ ամպերի վրայ չեմ մրտածել.
Քանի որ չունիմ մազ մի սպիտակ՝
Գլուխդս պապիս պէս երբեք չեմ կախել:

Բացուող ծաղիկը մտքին չի բերել
Թէ դաժան աշունքին մօտ է ու շատ մօտ.
Ու վառ վառուող աստղն երբեք չի մտածել
Թէ նորա կեանքն է մինչեւ առաւօտ:

Ախալցխա: ՄԿՐՏՈՒՂ ԱԼԻԽԱՆԵԱՆ

ԱԲՈՒԹՅՈՒՆՔԻ ԳՈՅԵԱՆ

ԸՐՈՒԹԵՍՏՈՒՀԱՆԴԷՍՔ Ի ՎԻԵՆՆԱ

Այս տարի Դեկտ. 2ին Աւստրիոյ Օգոստափառ Կայսեր կայսրութեան քառասնամեայ յոբելէանը պիտի կատարուի։ Այս հանդիսին իբր պատրաստութիւն Վիեննայի մէջ պլէեւպլ արուեստահանդէսք (exposition) պիտի

digitised by A.R.A.R.@